



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 14/29-Ճ «24» 01 2023 թ.

### ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

### հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. 2023 թ. հունվարի 3-ից ԵՊՀ-ում ժամավճարային հիմունքով դասավանդողների համար սահմանել ներքոհիշյալ վարձատրման չափերն ըստ աշխատանքի ձևերի.

ա. Դասախոսություններ կարդալու, ասպիրանտներ, հայցորդներ, մագիստրանտներ, ավարտական աշխատանքներ ղեկավարելու և գրախոսությունների համար.

Դասավանդող	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
Գիտության դոկտոր / պրոֆեսոր	6000
Գիտության թեկնածու / դոցենտ	5000
Առանց գիտական աստիճանի / կոչման	4000

բ. Սեմինարներ, գործնական, լաբորատոր պարապմունքների անցկացման, կուրսային աշխատանքների, պրակտիկաների ղեկավարման, ստուգարքների, քննությունների ընդունման համար.

Դասավանդող	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
Գիտության դոկտոր / պրոֆեսոր	5000
Գիտության թեկնածու / դոցենտ	4200
Առանց գիտական աստիճանի / կոչման	3400

գ. Արտասահմանցի ուսանողներին օտար լեզվով դասավանդելու դեպքում նշված արժեքը բազմապատկվում է 1,5-ով:

դ. Ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովը նախագահելու համար.

Նախագահող	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
Գիտության դոկտոր / պրոֆեսոր	5500
Գիտության թեկնածու / դոցենտ	5000

2. Սույն հրամանի կատարումն ապահովելու նպատակով հանձնարարել ԵՊՀ հաշվապահությանը և անձնակազմի կառավարման բաժնին՝ կատարելու համապատասխան հաշվարկներ և ձևակերպումներ:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ